# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 268-Ա « 30 » հունվարի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետով.

1.Հաստատել «Երևանի մանկապատանեկան ստեղծագործության քաղաքային կենտրոն», «Աջափնյակ» գեղագիտական կենտրոն, «Զարթոնք» մանկական գեղարվեստական դաստիարակության կենտրոն, «Մանկապատանեկան տեխնիկական ստեղծագործության կենտրոն», «Թիվ 3 մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն», ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի «Մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության կենտրոն», Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Կորյուն Նիկողոսյանի անվան մանկապատանեկան արվեստի կենտրոն» և Երևանի Շենգավիթ վարչական շրջանի «Պատանեկության ստեղծագործական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն NN 1-8 հավելվածների:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի և սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

4.Սահմանել, որ սույն որոշման կատարման գործողությունները տարածվում են 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**